Փարկինգ Սիթի Սերվիս ՓԲԸ

PARKING CITY SERVICE

Parking City Service CJSC

Հասցե՝ ք.Երևան, Բյուզանդի փ. 1/3, հեռ.՝ 060-606-606, էլ. Փոստ՝ info@pcs.am

70/0303-1
03.03.2023թ.

«ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-Ի (ՀՎՀՀ՝ 00103837) ՏՆՕՐԵՆ՝
պարոն/տիկին Գ. ԵՍԱՅԱՆԻՆ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Համբարձումյան 91

Հարգելի պարոն Եսայան

«ՓԱՐԿԻՆԳ ՍԻԹԻ ՍԵՐՎԻՍ» ՓԲԸ-ի և «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ի միջև 2023թ.-ի հունվարի 13-ին կնքված N ՓՍՍ-ԳՀԱՊՁԲ-23/7 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ն պարտավորվել է մատակարարել «ՓԱՐԿԻՆԳ ՍԻԹԻ ՍԵՐՎԻՍ» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտ ապրանքները՝ մասնավորապես «Մալուխ պղնձե ջղերով 2,5x2մմ» թվով 2000 մետր և «Խոնավ Անձեռոցիկ» թվով 10 հատ, սակայն «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով չեն իրականացվել ստանձնված պարտավորությունները և մատակարարումներ չեն կատարվել:

Հաշվի առնելով, վերոգրյալը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետով սահմանված պահանջները՝ «ՓԱՐԿԻՆԳ ՍԻԹԻ ՍԵՐՎԻՍ» ՓԲԸ-ն 2023թ. մարտի 3-ից 25-րդ և 38-րդ չափաբաժինների մասով միակողմանի լուծել է N ՓՍՍ-ԳՀԱՊՁԲ-23/7 ծածկագրով գնման պայմանագիրը:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ առաջարկում ենք սահմանված կարգով և ժամկետներում ապահովել պայմանագրի կատարման ապահովման գումարի՝ 70680 (Յոթանասուն հազար վեց հարյուր ութսուն) ՀՀ դրամի չափով, և որակավորման ապահովումը՝ 106020 (Հարյուր վեց հազար քսան) ՀՀ դրամի չափով:

Վերոնշյալի վերաբերյալ «ՓԱՐԿԻՆԳ ՍԻԹԻ ՍԵՐՎԻՍ» ՓԲԸ-ն դիմել է Ձեզ սպասարկող բանկին՝ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ին:

«Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի տնօրեն՝ Վ. Հարությունյան